



 [English](#)

## Հայոց պատմության գրքերի համառոտ մատենագրություն անգլերենով

Աշխարհագրական տեսանկյունից Հայաստանն ընդգրկում է հայ ժողովրդի պատմական բնօրրանը հանդիսացող ավելի քան 300,000 քառակուսի կիլոմետր տարածք զբաղեցնող բարձրավանդակը, որի միջին բարձրությունը 1700 մետր է: Այդ բարձրավանդակն առանձին աշխարհագրական տարածք է, այնպես, ինչպես Անատոլիան, Իբերիան կամ Սկանդինավիան: Ներկայումս այդ տարածքի միայն մի փոքր հողակտորն է բնակեցված հայերով, խոսքը Հայաստանի Հանրապետության և վերջերս ազատագրված Արցախի մասին է: Վերջինս եղել է Հայոց թագավորության առանձին նահանգ, սակայն, ըստ էության, պատկանում է աշխարհագրական միևնույն տարածաշրջանին: Բարձրավանդակի մնացած մասը շարունակում է մնալ բռնագավթված, որտեղ հայազգի բնակչությունը ոչնչացվել, մահմեդականացվել կամ հարկադրված սփռվել է աշխարհով մեկ՝ սփյուռքի տեսքով. ներկայումս Սփյուռքը կազմում է ազգի ճնշող մեծամասնությունը: Այս առումով էական տարբերություն կա Հայաստանի՝ (Հայկական Բարձրավանդակ կամ Մեծ Հայք) և նրա հանրապետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի միջև: Վերջին շրջանում հրատարակվել են ուղեցույցներ, որոնք ներկայացնում են վերը նշված երկու հանրապետությունների այսօրվա ճշգրիտ պատկերը, օրինակ՝ Մաթյու Կարանյան, **Հայաստան և Ղարաբաղ**, Դենվիլ/Կալիֆորնիա, 2013թ. ■ Բռնագավթված Արևմտյան Հայաստանի մասին կարող եք կարդալ նույն հեղինակի **Հայկական Բարձրավանդակ: Արևմտյան Հայաստան**, Փասադենա/Կալիֆորնիա, 2019 աշխատությունը, իսկ երկրի քարտեզագրության ընդհանուր պատմության մասին՝ Ռուբեն Գալիչյանի **Պատմական Հայաստանի Քարտեզները: Քարտեզագրական Ժառանգություն**, Լոնդոն, 2004 աշխատությունը:

Հայաստանն ունի 3000 տարվա խորքային պատմություն. արձանագրությունները հիմնականում վերաբերում են նրա միապետական ժամանակաշրջանին, որի հիմքերը գտնվում են նախկին Ուրարտական ժամանակաշրջանում: Սակայն այդ կետից այն կողմ ևս գոյություն ունի հազարամյակների մշակութային պատմություն, որի մասին համապատասխան հնագիտական ուսումնասիրություններն ունեն էական նշանակություն: Ըստ ծագումնաբանության, Ուրարտուի հայերն առանձնանում էին

հարավային սեմական ժողովուրդներից, ինչպիսիք էին, օրինակ, ազդեցիկ ասորիները, որոնք Հայաստանն անվանում էին Նաիրի (գետերի երկիր): Ուրարտու կամ Նաիրի անվանումը (մ.թ.ա. 8-րդ դար) վերագրվում է Հարավային սեմական ժողովուրդներին: Հետագայում Հյուսիսում և Արևմուտքում մեծ ազդեցություն ունեցող արիական մշակույթները՝ դասական Հունաստան, հռոմեական աշխարհ և Պարսկաստան, տարանջատվեցին, որոնք Բարձրավանդակը կոչեցին Հայաստան: Օրինակ՝ Արևմտյան Պարսկաստանում «Հայաստան» բառին հանդիպում ենք հռչակավոր Բեհիստուն ժայռի վրա հայտնաբերված արձանագրություններում, որը ստեղծվել է Դարեհ (Դարիուս) Մեծի (մ.թ.ա. 522-486) կողմից, երեք լեզուներով՝ հին պարսկերեն, էլեմիթերեն և արքայերեն/բաբելոներեն:

Թեև հնդեվրոպական ժողովուրդների հեռավոր անցյալի միգրացիոն գործընթացների պատճառով հայերենը դասակարգվել է որպես հնդեվրոպական լեզուների առանձին ճյուղ, այնուամենայնիվ, լեզվաբանական առումով, ուրարտերենը ձևավորվել է Հայկական Բարձրավանդակի տարածքում և ամենասերտ կապն ունի հայերենի հետ: Պատմության մեջ, անշուշտ, բազմաթիվ լեզուներ փոխվել և զարգացել են: Այս առումով հատկապես տպավորիչ է հնդեվրոպացիների տարածումը Սկանդինավիայից մինչև Հյուսիսային Հնդկաստան ընկած հսկայական տարածքներ: Այնուամենայնիվ, նրանք չկարողացան զգալիորեն փոխել երկրի բնիկ ազգաբնակչությունը, քանի որ մարդաբանորեն Արմենիդը մնաց որպես գերակշռող ազգ: Այդ իրողությունը դարձավ Հայկական Բարձրավանդակի գաղափարախոսությունը: Ելնելով այս ամենից՝ հասկանալի է, որ արտաքին գործոնները միայն լեզվաբանական առումով էին ազդեցիկ, իսկ նոր հետազոտությունների շնորհիվ հայտնի է դառնում, որ այդ մոտեցումներում հաշվի առնված չէ Հայաստանի ազդեցությունը նրա Բարձրավանդակից այն կողմ՝ մինչ-հնդեվրոպական ժամանակագրությունը: Նոր ուսումնասիրությունները վկայակոչում են նախահայերենի և շումերերենի միջև առկա զգալի նմանությունները: Դիտարկենք հետևյալ օրինակը, ինչպիսին է՝ Լապիս Լազուլի կիսաթանկարժեք քարի անհերքելի նշանակությունը շումերական մշակույթում: Վաղնջական ժամանակներում Հայաստանը այդ քարի փխրուն տեսակի հիմնական մատակարարն էր, և, փաստորեն, քարի անվանման մյուս տարբերակը հայտնի է որպես «Լապիս Արմենուս» (հայկական քար): Այդ քարի երկնագույն երանգը խորհրդանշում է երկնային արքայությունը: Այս տարբերակի հավանականության վերաբերյալ կան մի շարք պնդումներ: Այնուամենայնիվ, քարի հոգևոր նշանակությունն արժևորվում է այնքան ժամանակ, քանի դեռ այն չի պղծվել «ներխուժող կործանիչի» կողմից:

Որպես թագավորություն, Հայաստանն իր գագաթնակետին հասավ դեռևս մեր թվարկությունից առաջ՝ իր տարածքներն ընդարձակելով Բարձրավանդակից դուրս՝ Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով: Եթե նկատի ունենանք նաև հայկական բարձրավանդակի հյուսիսում գտնվող ծովային մասը, որը սահմանակից է փոքր տարածք ունեցող դաշնակից Պոնտոսի սևծովյան հատվածին, հայոց երկիրը ներկայանում է որպես երեք ծովերի պետական ճարտարապետություն: Այսպիսով, հայկական Բարձրավանդակն ընդարձակվում է, և ձևավորվում է «Աստեղային Հայաստանը»: Դա տեղի է ունեցել Տիգրան Մեծի, լատիներեն՝ «Տիգրանես Մագնուս», գահակալության օրոք (Ք.ա. 95-55 թթ.): Թագավորության ընդլայնումը նշանակալի է, օրինակ՝ հարավում Հայաստանի զորքերը հասնում են մինչև Երուսաղեմի դարպասները, թեև քաղաքը չեն գրավում: Հիրավի, Արարատ Երկրի ի հայտ գալը համեմատաբար խաղաղ ընթացք է ունեցել: Երուսաղեմի երբայական տոհմերի հետ փոխըմբռնման հասնելուց հետո Տիգրանը

հեռանում է: Որոշ ժամանակ անց, Բ. ա. 63 թ.-ին, գրավում են քաղաքը հռոմեական զորքերը: Միայն մեկ սերունդ անց այս նույն տեղանքում համաշխարհային նշանակության հրեշտակային կերպարանքը պետք է քայլեր ջրի վրայով, և Միածինը դառնար քաղաքակրթության նոր շարժիչ ուժը: Հետագայում այդ բարգավաճող ընտրյալ երկիրը հանդիսացել է որպես Սուրբ երկիր: Այս ժամանակաշրջանում ականատես ենք լինում Արևմուտքում ամենահզոր գերտերության՝ Հռոմեական Հանրապետության, և երկրորդ դիրքում գտնվող Արևելյան կայսրության՝ Պարթևյան Իրանի միջև դաժան պատերազմների: Հայաստանը, որը գտնվում էր այդ երկու սրերի ծայրին, մշտապես տուժում էր այս բախումներից: Չնայած այն հանգամանքին, որ բազմաթիվ եվրոպական նշանավոր կոմպոզիտորներ, այդ թվում իտալացի և գերմանացի, իրենց ստեղծագործություններում անդրադարձել են Տիգրան Մեծին, զարմանալի է, որ անգլերենով հրատարակված այդ թեմայով գիտական աշխատությունները խիստ սահմանափակ են:

Մասնագետների կողմից ընդունված հայտնի աշխատությունները վկայում են, որ դարերի ընթացքում, քաղաքակրթության զարգացմանը զուգահեռ, Հայաստանն՝ աստիճանաբար ընդգրկվել է եվրոպական / արևմտյան քաղաքակրթության շրջանակում՝ որոշակի կշռի հասնելով սուրբգրչյան գրականության մեջ: [Եվրոպայի սահմանները, Քաղաքակրթության մեջ մշակութային միություն:](#) Ըստ այդմ, Աստվածաշնչի «Օննոց» գրքում Հայաստանը նշվում է որպես Արարատյան երկիր: Բացի այդ, արձանագրվում է, որ Նոյյան տապանը հանգրվանել է Արարատ լեռան վրա: Տապանի հանգրվանելը ընկալվում է նախ որպես Արարատ լեռ, քանի որ դա լեռնաշխարհի գագաթն է: Այնուհետև Նոյն իջնում է և Արարատյան դաշտավայրում խաղողի այգիներ է տնկում: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ այս հոյակերտ լեռան առջև գտնվող Արարատյան դաշտավայրը հնագույն ժամանակներից ի վեր եղել է գինեգործության տարածաշրջան:

Բացի այդ, կարելի է համարել, որ Աստվածաշնչում նշված Եդեմական պարտեզի աղբյուրը սկիզբ է առնում հենց Հայակական լեռնաշխարհում: [Հայաստանի քարտեզագրություն](#) [էջ.4]. Այս սուրբ պատկերը վերահիմաստավորվում է, երբ ևս մեկ անգամ Արարատ լեռան ստորոտում Հայաստանը դառնում է քրիստոնեությունն իբրև պետական կրոն ճանաչած առաջին երկիրը: Իրականում նկարագրված զարգացումներն մեսսիական են, որոնք հասու չեն սովորական մահկանացուին: [Քրիստոնեություն և կառավարում:](#) Իսկապես, այս արարումն օդի մեջ մնացած ուժ է:

Զարմանալի է, որ եվրոպական / արևմտյան քաղաքակրթությունը չի կարողացել պաշտպանել Աստվածաշնչյան Սրբազան լեռնաշխարհը Կենտրոնական Ասիայի կողմերից ներխուժած հրոսակներից, որոնք, ըստ էության, տարածաշրջանի համար օտար են: Ոչ մի քաղաքակրթություն էրբևէ չպետք է կորցնի իր առաջնային հիմքերը, հակառակ դեպքում այդ կորուստը կդառնար իր կործանման առաջին քայլը: Այս առումով հարկ է նկատել, որ արևելքում Հռոմը՝ Բյուզանդիան, որը եվրոպական/արևմտյան քաղաքակրթությունը բերեց դեպի Արևելյան Եվրոպա, հիմնահատակ ոչնչացվեց: Անատոլիան, որն այդ անմահ առաջընթացի հիմնասյուներից մեկն էր, այժմ օտարացած անապատ է: Ելնելով հանգամանքներից այդպիսի անապատները հնարավորության դեպքում պետք է նորից ծաղկեցնել: Հասկանալի է, որ առաջընթացն ունի իր դժվարությունները, քանի որ տվյալ քաղաքակրթության ներքին թշնամին, վտանգավոր կերպով, մեծ մասամբ խանգարում է, սակայն այդ թշնամու համագործակցությունն արտաքին թշնամիների հետ ևս վտանգավոր է, քանի որ դա խանգարում է եվրոպական

մշակույթների միասնությանը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ Արևելքում պետք չէ թույլ տալ, որպեսզի այդ քաղաքակրթությունը պարտվի: [Իրավունքներ և արժեքներ:](#)

Բնականաբար, բավական մեծաթիվ հայալեզու աշխատություններ կան այս երկրի մասին: Նրա եզակի այբուբենը հիմնադրվել է մ.թ. 405 թ. -ին Մեսրոպ Մաշտոցի կողմից: Արևմտյան և արևելաեվրոպական լեզուների շարքում՝ Հայաստանի և հայերի մասին առաջատար տեղ են զբաղեցնում անգլերենով գրված աշխատությունները: Հատկապես խոսքը վերաբերում է կենսագրականներին, տեսողական և կատարողական արվեստին, ինչպես նաև գրականությանը: Բացի այդ, կարելի է առանձնացնել ազգային ճարտարապետությունը, ներառյալ խաչքարերը, պատկերագար դեռագրերը, Եկեղեցու պատմությունը, ցեղասպանությունը, Մփյուռքը, գեղանկարչությունը, լուսանկարչությունը, մանածագործությունը՝ ներառյալ գորգագործությունը, առհասարակ՝ ձեռագործ աշխատանքները, ինչպես նաև խոհարարական արվեստը: Վերոնշյալ ոլորտների վերաբերյալ հանրամատչելի հրապարակումների քանակը զգալիորեն տարբերվում է: Օրինակ, անգլերեն լեզվով [Ցեղասպանության](#) թեմայով գիտական գրքերի թիվը գերազանցում է 250-ը, ընդ որում, բավականին քիչ թիվ է կազմում ցեղասպանությունը սատարողների կողմից հրապարակված գրքերի քանակը: Մյուս կողմից, չափազանց քիչ են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում Մփյուռքին նվիրված գրքերը: Դրանցից է, օրինակ, Մարիան Օլեսի վերնագրված *«Լեհաստանի Թագավորության հայկական օրենքը» (1356-1519)* աշխատությունը (Հռոմ, 1966 թ.): Օսմանյան կայսրության տարածքից բռնի տեղահանված հայ բնակչությունն, իհարկե, արևմտահայերն են՝ Հայաստանը և Կիլիկիայի նախկին թագավորությունը, ոչ թե Մփյուռքը: Հետագա տեղահանումը կատարվեց օսման-պարսկական պատերազմների ժամանակ, երբ օսմանները, առաջ շարժվելով Արևմուտքից, Արևմտյան Հայաստանը գրավեցին Պարսից կայսրությունից: Օսմանները տարածաշրջանի նորեկներ էին: Հետևաբար, Շահ Աբբաս I-ը (թագավորեց 1588-1629թթ.) տեղահանեց և Իրանում վերաբնակեցրեց Հայաստանի բնակչության մի հատված: Նրանք հիմնականում վերադառնում էին 19-րդ դարի երկրորդ քառորդի ընթացքում Արևելյան Հայաստանի իրենց տները, այն բանից հետո, երբ ռուսները ստացան այդ տիրույթի վերահսկողությունը: Հայերն իրավունք ունեն ամբողջությամբ բնակեցնելու իրենց լեռնաշխարհը:

Ուղեցույցները և տեղեկագրական հրատարակություններն սկսեցին առավել մեծ թվով հայտնվել XIX դարի առաջին քառորդից հետո: Առավել նշանակալի տեղեկագրական աշխատություններն, այնուամենայնիվ, մշակված են քսաներորդ դարի երկրորդ կեսին: Երկրի մասին ընդհանուր ուսումնասիրություններն, իհարկե, գալիս են վաղնջական ժամանակներից. նույնիսկ կարելի է հղում կատարել դասական հունարենից թարգմանված հատվածներին: ■ Ընդհանուր ծանոթագրական մատենագրության համար տես՝ Դոկտոր Վրեժ Ներսիսյան, *Հայաստան. Աշխարհի մատենագրական շարք*, Օքսֆորդ, 1993թ. ■ Միննույն հեղինակի կազմած հետագա աշխատությունը՝ *Արևմտյան ամսագրերում Հայկական ուսումնասիրությունների մասին հոդվածների մատենագրություն, 1869-1995թթ.*, Ռիչմոնդ/Մուրրեյ, 1997թ.՝:

Հայաստանի ընդհանուր պատմությանը, այդ թվում ներկա ժամանակաշրջանին վերաբերող գիտաաշխատությունները, թվով շատ չեն: Հետևաբար, վերջին շրջանի աշխատություններում կարելի է գտնել համեմատաբար այն լավագույն գործերը, որոնցում առավել ընդգծված և նշանավորված են ոչ միայն անցյալ, այլև ներկա ժամանակաշրջանները: ■ Մարդաբանության առումով՝ Ս. Քոռնի աշխատությունը,

Եվրոպայի ռասաները, հրատարակված ԱՄՆ-ում 1939 թվականին Մաքսիլանի կողմից, 739 էջանոց ընդգրկուն աշխատություն է: Այն, ըստ էության, վերաբերում է հայկական տեսակետին: Կառլոն Սթիվենս Քոնը Փենսիլվանիայի համալսարանի մարդաբանության պրոֆեսոր էր, Հարվարդի համալսարանի դասախոս, պրոֆեսոր և Ֆիզիկական մարդաբանության ամերիկյան ասոցիացիայի նախագահ: ■ Ուրարտական ժամանակաշրջանի համար կարելի է դիտարկել Բորիս Պետրովսկու աշխատանքը՝ Ուրարտուի հնագույն քաղաքակրթությունը, Մպոկան/Վաշինգտոն, 1969թ. ■ Հյուսիսից և հարավից դեպի հնագույն Արարատ ցեղային ներթափանցումների վերաբերյալ կարելի է ընթերցել նաև Չարլս Բուրնեյի և պրոֆեսոր Դեյվիդ Մարշալի Սարերի մարդիկ աշխատությունը, Լոնդոն, 1971թ.: ■ Վաղ շրջանի պատմությունը ներկայացնող բավականաչափ ծավալուն, նկարագրողումներ և ժամանակագրական աղյուսակ պարունակող ուսումնասիրություն է պրոֆեսոր Դեյվիդ Մարշալ Լանգի, Հայաստան. Քաղաքակրթության օրրան գիրքը, Լոնդոն, 1980թ., երրորդ հրատարակություն: ■ Որոշակի խորքայնություն պարունակող մանրամասն համառոտագիր է հրատարակել պրոֆեսոր Սիրարփի Տեր-Ներսիսյանը, Հայերը, Լոնդոն, 1969թ. ■ Միջնադարի համար, ներառյալ բյուզանդական դարաշրջանը, համապատասխանում է Քենթրիջի Միջնադարյան Պատմություն բազմահատոր աշխատության IV հատորի մաս I-ը, որը հրատարակված 1965 թվականին: ■ Պրոֆեսոր Նինան Գ. Գարսոյանը հրատարակել է մի շարք աշխատություններ միջնադարի վերաբերյալ, օրինակ՝ Վաղ միջնադարյան Հայաստանի մշակույթը և եկեղեցին, Օքսֆորդշայր, 1999թ. ■ Կիլիկիայի մասին՝ միջնադարյան հայկական թագավորությունը, որը հիմնվել է Անատոլիայի արևելյան միջերկրական ափին, կարելի է ուսումնասիրել Տ.Ս. Բոասի Կիլիկիայի Հայկական Թագավորությունը աշխատությունը Էդինբուրգ, 1978թ. ■ Քրիստոֆեր Ջ. Ուոլքերի երկու աշխատություններն ամենաընդգրկունն են, հատկապես ներկա ժամանակաշրջանի առումով՝ Հայաստան. Ազգի գոյատևումը, Լոնդոն, առաջին հրատարակություն, 1980թ., և Արարատի տեսլականները. Գրվածքներ Հայաստանի մասին, Լոնդոն և Նյու Յորք, 1997թ.: ■ Խորհրդային ժամանակաշրջանի՝ Արևելյան Հայաստանի մասին խելամիտ ուսումնասիրություններից է Մոսկվայում 1971 թվականին «Պրոգրես» հրատարակչության կողմից Ա. Ա. Ասլանյանի, Ա. Բ. Բաղդասարյանի, Լ. Ա. Վալեսյանի և Ս. Մ. Դուլյանի հրատարակած աշխատությունը: ■ Հարկ է նշել Պրոֆեսոր Ռիչարդ Գ. Հովհաննիսյանի խմբագրած աշխատությունը՝ Հայ ազգը հնագույն ժամանակներից մինչև ներկա ժամանակներ, Նյու Յորք, 1997թ., 2 հատոր: ■ Պրոֆեսոր Ջորջ Ա. Բուրնոյանի աշխատությունը շարունակում է մնալ լայնորեն տարածված, Հայ ժողովրդի համառոտ պատմությունը, Կոստա Մեսա/Վալիֆորնիա, երկրորդ խմբագրություն, 2002թ. Վերջին երկու ակադեմիկոսները հետագայում ևս հրապարակել են համապատասխան աշխատանքներ: ■ Պրոֆեսոր Սիմոն Փայասյանն ավելի ուշ լույս է ընծայել Հայաստանի Պատմությունը գիրքը, Նյու Յորք, 2008թ.: ■ Հայաստանի Հանրապետությունում հրատարակված պրոֆեսոր Արմեն Խաչիկյանի աշխատությունը՝ վերնագրված Հայաստանի պատմություն. Համառոտ ամփոփագիր, Երևան, 2011թ.:



*Թ. Ս. Քահվե,  
Արարատ Ժառանգություն,  
Լոնդոն, սեպտեմբեր, 2019*